« 31 » մարտ 2025թ. No 1904 - Ա

«ՍՊԻՐՈՄԵՏՐԻԱ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ
Ապրիլի 26, 2025թ, շարունակաբար, ք. Երևան
«Թոքաբանների ասոցիացիա» ՀԿ

- Թիրախային լսարան՝ թոքաբաններ, ֆթիզիատրներ, սրտաբաններ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 50 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 3 տեսական և 3 գործնական կրեդիտ. սեմինարավար Մարինե Պետրոսյանին՝ ՇՄԶ 3 տեսական և 3 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 093343559

10:30-11:00	Գրանցում
11:00-11:30	Հարցեր մասնակիցներին. ո՞վ է կիրառում սպիրոմետրիան ամենօրյա կլինիկական պրակտիկայում: Ո՞վ է անձամբ կատարում սպիրոմետրիա: Ի՞նչ բարդությունների հետ եք առնչվում սպիրոմետրիա կատարելիս կամ արդյունքները մեկնաբանելիս: Նախաթեստ
11:30-13:30	**Սեմինար** Մաս 1. Շնչառության ֆիզիոլոգիան: Շնչառական անբավարարության սահմանումը և դասակարգումը: Արտաքին շնչառության ֆունկցիան և նրա բաղադրիչները: Թոքերի ֆունկցիայի գնահատման նշանակությունը և պատմությունը: Թոքերի ֆունկցիոնալ թեստերը: Սպիրոմետրիա: Թոքերի ծավալների որոշումը՝ բոդիպլետիզմոգրաֆիա (RV, FRC, TLC): Իմպուլս օսցիլոմետրիա (IOS): Թոքերի դիֆուզիոն ֆունկցիայի գնահատումը (DLCO): Արտաշնչման NO (FeNO:) Սիրտ-թոքային ծանրաբեռնվածության թեստ (CPET): Ի՞նչ է գնահատում սպիրոմետրիան: Ի՞նչ չի գնահատում սպիրոմետրիան: Ի՞նչպես չի կարելի ձևակերպել սպիրոմետրիայի պատասխանը: Ի՞նչպես է պետք ձևակերպել սպիրոմետրիայի պատասխանը: Սպիրոմետրայի պատմությունը XIX դարից մինչև XXI դար: Սպիրոմետրերի էվոլյուցիան: Մաս 1.2. Սպիրոմետրիայի տեսությունը: Սպիրոմետրայի ցուցումները և հակացուցումները: Սպիրոմետրիայի դերը կլինիկական պրակտիկայում: Սպիրոմետրիայի հնարավորությունները: Թոքերի տարողությունները և ծավալները: Սպիրոմետրիայի ցուցանիշները և նրանց ֆիզիոլոգիական նշանակությունը: Սպիրոմետրիայի ցուցանիշների փաստացի և սահմանված արժեքները, շեղման տոկոսի հաշվարկումը: Թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի խանգարման տեսակները՝ օբստրուկցիա և ռեստրիկցիա: Սպիրոմետրայի կորերը՝ հոսք-ժամանակ, ծավալ-հոսք նորմայում, օբստրուկցիայի և ռեստրիկցիայի ժամանակ: Օրինակների ցուցադրում: Ծավալ-հոսք կորի տեսակները և նրանց տարբերակումը: Օրինակների ցուցադրում
13:30-14:00	Ընդմիջում

14:00-17:00	**Գործնական աշխատանք** Մաս 2. Սպիրոմետրիա: Սպիրոմետրի ցուցադրում: Սպիրոմետրի հետ աշխատելու կանոնները: Սպիրոմետրիա թեստի նախապատրաստումը, հետազոտվողի տվյալները: Սպիրոմետրիայի կատարումը: Որպես հետազոտվող՝ կամավոր մասնակից: Արագ արտաշնչման մանևրի ճիշտ իրականացումը: Սպիրոմետրիա թեստի որակի գնահատման չափանիշները: Սպիրոմետրիա թեստի ընդունելի լինելը: Կատարված սպիրոմետրայի գնահատումը: Օբստրուկտիվ և ռեստրիկտիվ խանգարումների սահմանումը և ծանրության աստիճանի որոշումը: Օրինակների ցուցադրում: Սպիրոմետրիայի տվյալների գնահատման ալգորիթմը: Սպիրոմետրիայի պատասխանի ձևակերպումը: Սպիրոմետրիայի դերը բրոնխիալ ասթմայի (ԲԱ) և թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության (ԹՔՕՀ) տարբերակիչ ախտորոշման պրոցեսում: Սպիրոմետրիայի նշանակությունը ԲԱ-ի ախտորոշման ալգորիթմում (ERS 2022): Սպիրոմետրիայի նշանակությունը ԹՔՕՀ-ի ախտորոշման և դասակարգման պրոցեսում (GOLD 2025): Սպիրոմետրիայի դերը մարդու ընդհանուր առողջական վիճակը գնահատելու գործում: Մաս 2.1. Բրոնխալայնիչ թեստ, բրոնխասադրիչ թեստ: Բրոնխալայնիչ թեստի կատարման ցուցումները և կլինիկական նշանակությունը: Բրոնխալայնիչ թեստի արդյունքների մեկնաբանությունը: Օրինակների ցուցադրում և քննարկում: Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության և բրոնխիալ ասթմայի տարբերակումը ըստ բրոնխալայնիչ թեստի: Օրինակների ցուցադրում և քննարկում Բրոնխասադրիչ թեստի կատարման ցուցումները: Թեստի դրական և բացասական կանխատեսիչ ուժը: Թեստի դերը բրոնխիալ ասթմայի ախտորոշման ալգորիթմում (ERS 2022): Սպիրոմետրիայի մեկնաբանությունը արհեստական բանականության կողմից: Մաս 2.2 Սպիրոմետրիայի տվյալների և կլինիկական դեպքերի քննարկում: Սխալ կատարված և սխալ մեկնաբանված սպիրոմետրիայի պատասխանների քննարկում: Սպիրոմետրիայի եզրակացություններ՝ սովորենք ուրիշների սխալների վրա: Կլինիկական դեպքերի քննարկում: Մաս 2.3 Սպիրոմետրայի տվյալների մեկնաբանություն մասնակիցների կողմից
17:00-17:30	Հարցեր և պատասխաններ
17:30-18:00	Հետթեստ

Սեմինարավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր, Մարինե Պետրոսյան: